

ԿԱՐԾԻՔ

Լուսինե Տիգրանի Հովհաննիսյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մասին/ Մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 – **Դատական իրավունք** – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)

Լուսինե Հովհաննիսյանի ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը վերաբերում է առաջին ատյանի դատարանում ապացուցմանը պաշտպանի մասնակցության հիմնախնդիրներին: Պաշտպանի դատավարական կարգավիճակի և ապացուցմանը նրա մասնակցության հնարավորությունների, դրանց սահմանների հարցերը կապված են քրեական վարույթում հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման համընդհանուր խնդրի հետ և, ինչպես նկատել է նաև հեղինակը առանցքային նշանակություն ունեն ընդհուպ քրեական դատավարության տիպը որոշելու հարցում: Այս հանգամանքն արդեն իսկ թույլ է տալիս դրանք դասել քրեական դատավարության գիտության մեջ գրեթե անլուծելի խնդիրների շարքը, ինչն ինքնին պայմանավորում է հետազոտության արդիականությունը: Մեղադրանքից պաշտպանվելու հնարավորությունների, այդ նպատակով ապացույցներ ներկայացնելու, դրանց հետազոտմանը դատավարական տարբեր գործիքներով մասնակցելու պաշտպանի հնարավորությունների մասին գիտական քննարկումները շարունակվելու են անվերջ՝ տարբեր ժամանակներում ենթարկվելով քրեական վարույթի ինկվիզիցոն տարրերն ամրապնդելու կամ դրանք բացառելու հակադիր մոտեցումների ազդեցություններին և այդ մոտեցումների բախումներն էլ ծնելու են նոր հիմնավորված գաղափարներ՝ մի կողմից մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման գործիքակազմն ամրապնդելու, մյուս կողմից՝ արդյունավետ քննության հնարավորությունները չսահմանափակելու նոր եղանակների վերաբերյալ:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ գործող քրեական դատավարության օրենսգիրքը, իրացնելով մինչև դրա ընդունումը դատական իրավունքում ձևավորված մոտեցումներն ու հաշվի առնելով գիտության առաջանցիկ ձեռքբերումները, էապես վերափոխել է քրեադատավարական հարաբերությունների բովանդակությունն ու ձևը, սահմանել մրցակցության սկզբունք-կառուցակարգի նոր կենցեպտ, դատարանի հարաբերականորեն ակտիվ կարգավիճակ, առանցքային

դատավարական ինստիտուտների, ինչպես օրինակ քրեական հետապնդումը կամ ապացուցումն է, նոր կարգավորումներ, ապացույցներ ձեռք բերելու նոր հնարավորություններ, ապացույցների օգտագործման սահմանափակումներ, որոնց պայմաններում ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության հիմնահարցերի համապարփակ վերլուծությունը միանշանակ բխում էր օբյեկտիվ անհրաժեշտությունից:

Չափազանց կարևոր են համարում, որ նման հետազոտությունն իրականացված է պրակտիկ փաստաբանի կողմից, հիմնախնդիրները դիտարկված են ապացուցման գործընթացին գործնականում մասնակցողի աչքերով, ինչը թույլ է տվել վերլուծել հարցեր, որոնք ոչ բոլոր հետազոտողներին են տեսանելի և հաշվի առնել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք թաքնված են առավել խոշոր թվացող հարցերի հետևում:

Շեռևաբար, Լուսինե Հովհաննիսյանի կողմից ատենախոսական հետազոտության համար ընտրված «**Պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը առաջին ատյանի դատարանում**» թեման զգալի գիտական հետաքրքրություն, իսկ դրա նման խորքային հետազոտությունը՝ պրակտիկ կարևորություն է ներկայացնում:

Արդիականությամբ և դրա նկատմամբ գիտական մեծ հետաքրքրություններով պայմանավորված՝ ատենախոսության թեման բարձր գիտական մշակվածություն ունի: Պաշտպանի դատավարական կարգավիճակի և այդ համատեքստում ապացուցմանը նրա մասնակցության հարցերը հետազոտվել են ականավոր իրավաբանների աշխատություններում: Բայց պաշտպանության ներկայացված ատենախոսությունը քրեական դատավարության նոր օրենսգրքով սահմանված հայեցակարգային նոր լուծումների և դրանցից բխող զուտ ընթացակարգային կարգավորումների առաջին համապարփակ հետազոտությունն է, որը վերաբերում է հատկապես ապացուցմանը պաշտպանի մասնակցության հարցերին:

Մեր համոզմամբ՝ քննարկված հարցերի շուրջ կատարված եզրահանգումները և առաջարկները պարունակում են գիտական նորույթ, զգալի գիտական հետաքրքրություն են ներկայացնում, ինքնուրույն են, ունեն տեսական և գործնական կարևոր նշանակություն:

Հեղինակին հաջողվել է պատշաճ կերպով սահմանել հետազոտության մեթոդաբանությունը, ճիշտ ձևակերպել հետազոտության նպատակներն ու հասնել դրանց՝ հիմք ընդունելով նաև ճշգրտորեն նույնականացված և առանձնացված խնդիրները համախումբը:

Հետազոտության տեսական հիմքում են և՛ հայաստանյան, և՛ արտասահմանյան տեսաբանների գիտական աշխատությունները: Հեղինակի կողմից ուսումնասիրվել են մեծ ծավալի գիտական աղբյուրներ, որոնց նկատմամբ ցուցաբերվել է բազմակողմանի

մոտեցում, դիտարկվել են հետազոտության առարկա խնդիրներին վերաբերող հակադիր մոտեցումները:

Աշխատանքի գիտական նորոյթը արտահայտվում է նրանում, որ դրանում առաջին անգամ համապարփակ վերլուծության են ենթարկվել պաշտպանության իրավունքի և սկզբունքորեն այլ ծավալ, ընթացակարգ և բովանդակություն ստացած դատաքննության փուլի հիմնախնդիրները, դրանք դիտարկվել են փոխադարձ օրգանական կապի մեջ: Գիտական նորոյթն իր արտահայտությունն է գտել պաշտպանության ներկայացված դրոյթներում, որտեղ հեղինակը թիրախավորել է պաշտպան-վարոյթն իրականացնող մարմին, պաշտպան-վստահորդ, հարաբերությունները, դրանց համատեքստում ապացուցմանը նրա մասնակցության առարկայական հարցերը: Գիտական նորոյթը շարադրվել է՝ հիմքում ունենալով ինչպես տեսական աղբյուրներներն ու գործնական նյութերը՝ այդ թվում ձևավորված դատական իրավունքը, այլ նաև հենց հեղինակի պրակտիկան:

Հետազոտության արդյունքների փորձարկումն իրականացվել է հեղինակի կողմից հրատարակված թվով յոթ հոդվածներում, զեկույցներում, գիտաժողովների ընթացքում վերջինիս ելույթներում:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, ութ պարագրաֆներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է թեմային, դրա նպատակներին և խնդիրներին: Ատենախոսության առանձին բաղադրիչները փոխկապակցված են միմյանց հետ, բնականորեն շարունակում և փոխլրացնում են միմյանց:

Աշխատանքի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այն կատարված է պատշաճ մակարդակով, ներկայացվող առաջարկությունները գիտականորեն հիմնավորված և ընդունելի են:

Ատենախոսության առաջին գլուխը հետագա հետազոտության հիմքն է: Դրանում ուսումնասիրվում են պաշտպանության իրավունքի բովանդակությունը, մրցակցության, կողմերի հավասարության (զենքերի հավասարության) գաղափարների հետ դրա հարաբերակցությունը: Աշխատանքի այս հատվածում է ներկայացվում պաշտպանի դատավարական կարգավիճակի ընդհանուր բնութագիրը՝ շեշտադրելով նրա և վստահորդի հարաբերությունների դատավարական և էթիկական կողմերը, պաշտպանի ինքնուրույնությունն ու անկախությունը, նրա ներկայացուցչական կարգավիճակի պայմաններում զուտ մասնագիտական հարցերում ինքնուրույնության խիստ բարձր մակարդակը:

Հետաքրքրական է հեղինակի վերլուծությունը պաշտպանի և վերույթն իրականացնող մարմնի հաղորդակցության կազմակերպման առնչությամբ, անգամ երբ պաշտպանն այլևս դադարում է անձի ներկայացուցիչը հանդիսանալ: Այստեղ, հեղինակը համադրում է պաշտպանների նկատմամբ կիրառելի այնպիսի հրամայական, ինչպիսին է վստահորդի շահերից գործելը՝ քննարկելով այն «նախկին վստահորդ» հասկացության համատեքստում: Հեղինակը կարծում է նաև, որ պաշտպանության իրավունքի և պաշտպանի՝ ապացուցմանն արդյունավետ մասնակցության հիմքում ընկած են ոչ միայն այն հնարավորությունները և իրավունքները, որոնք տրամադրում է օրենսդիրը, այլև անհատ փաստաբանի վարքագիծը, «բարոյաէթիկական կողմնացույցը»:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերաբերում է ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության դատավարական հիմքերին: Այս գլխի շրջանակում հեղինակը քննարկման առարկա է դարձնում պաշտպանության կողմի իրավունքը՝ մասնակցել ապացուցմանը՝ քննարկելով նաև մասնակցության բովանդակային կոմպոնենտը, պաշտպանության կողմի հնարավորությունը որևէ կերպ չմասնակցել ապացուցմանը՝ որպես պաշտպանական տակտիկայի բաղկացուցիչ մաս: Առանձին ուշադրություն է դարձվել նաև պաշտպանի կողմից ստացված ապացույցների թույլատրելիության հարցերին:

Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է դատաքննության երեք առանձին ենթափուլերում՝ նախնական, հիմնական և լրացուցիչ դատալսումներում ապացուցմանը պաշտպանի մասնակցության հիմնահարցերին: Այս համատեքստում, ուշագրավ են հեղինակի առաջարկները մեղադրանքի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու, նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունների, միջնորդությունների քննարկումն ու լուծումը հետաձգելը բացառելու վերաբերյալ:

Ողջունելով հիմնական և լրացուցիչ դատալսումները և դրանցում լուծվող հարցերի շրջանակն առանձնացնելու օրենսդրի մոտեցումը՝ հեղինակն առաջ է քաշում այն կատարելագործելու գաղափար և առաջարկում առանձնացնել նաև այդ ենթափուլերում քննարկվող հարցերին վերաբերող ապացույցները և հիմնական դատալսումներում՝ մեղադրանքի հիմնավորվածության հարցը քննարկելիս դատարանին մատչելի չդարձնել այն տվյալները որոնք կանխորոշելու են պատիժ նշանակելու հարցերի լուծումը:

Աշխատանքում կարելի է հանդիպել այլ հիմնավոր առաջարկների և վերլուծությունների ևս, որոնք գիտականորեն ընդունելի կերպով հիմնավորված են:

Ի լրումն, ատենախոսության **սեղմագիրն** արտացոլում է դրա հիմնական բովանդակությունը: Հեղինակի գիտական հոդվածները, իրենց հերթին, արտացոլում են հիմնական դրույթները և եզրահանգումները:

Չնայած հեղինակի կողմից իրականացված հետազոտությունը և դրա արդյունքները օբյեկտիվորեն արժեքավոր են, անհրաժեշտ և գիտականորեն հիմնավոր, այնուամենայնիվ ստորև ներկայացնում ենք որոշ դիտողություններ:

1. Պաշտպանության ներկայացվող դրույթները շատ ավելի ընկալելի կլինեին և ավելի լավ կարտահայտեին հետազոտության խորը գիտական էությունը, եթե ձևակերպվեին կատեգորիկ հետևությունների տեսքով՝ առանց դրանցում առաջ քաշվող գաղափարների հիմնավորումներ ներկայացնելու: Պաշտպանության ներկայացվող դրույթների ներքո շարադրելով նաև պաշտպանվող գաղափարների բացատրությունները՝ հեղինակը որոշ չափով նվազեցրել է աշխատանքի արդյունքները դրանց միջոցով ամբողջական և պարզ ընկալելու հնարավորությունները:

2. Աշխատանքը զգալիորեն կշահեր, եթե դրանում առկա բազմակողմանի հետազոտության արդյունքում հեղինակը տար պաշտպանության իրավունքի գիտատեսական սահմանումը, հատկապես, որ կատարած հետազոտությունն ընթերցողի մոտ այդպիսի ակնկալիք առաջացնում է: Բանն այն է, որ ներկայացնելով պաշտպանության իրավունքի էության, բովանդակության, կապերի, նշանակության վերաբերյալ տեսագործական մոտեցումները, հեղինակն այդ վերլուծությունը կարող էր ամփոփել, բայց չի ավարտում հետազոտությամբ վեր հանած՝ դրա առանցքային հատկանիշները միավորող գիտական բնորոշմամբ:

3. Թեև աշխատանքում արդրադարձ կա պաշտպանական տակտիկային որպես ապացուցմանը պաշտպանի մասնակցության ձևի վրա ազդող հանգամանք, բայց տեղին կլիներ աշխատանքում դրանց անդրադառնալ ավելի խորքային՝ նկատի ունենալով, որ իսկապես պաշտպանի կողմից ապացուցմանը մասնակցելն ու նրա գործնական քայլերը չափազանց շատ են կախված հաճախ կիրառվող պասսիվ պաշտպանության տակտիկայից:

4. Նույն համատեքստում, այնքանով, որքանով ատենախոսության մեջ հաջողությամբ բացահայտված է պաշտպանության իրավունքի և զենքերի հավասարության ու անմեղության կանխավարկածի, ինչպես նաև հիմնարար այլ գաղափարների փոխադարձ կապը, պաշտպանի կողմից ապացույց ներկայացնելու հնարավորությունն ու դրա պարտականության բացակայությունը տեղին կլիներ քննարկել նաև մեղադրողի կողմից նոր ապացույցներ ներկայացնելու սահմանափակ հնարավորությունների, և որ ամենակարևորն է՝ պաշտպանի կողմից վերաքննիչ դատարանում նոր ապացույցներ ներկայացնելու սահմանափակումների համատեքստում: Մեր համոզմամբ, վերաքննիչ դատարանում նոր ապացույց ներկայացնելու պայմանները պաշտպանության կողմի այդ թվում պաշտպանի համար անուղղակիորեն առաջացնում են առաջին ատյանի դատարանում ապացույց

ներկայացնելու ակտիվություն ցուցաբերելու պարտականություն՝ բախվելով անմեղության կանխվարկածի սկզբունքին:

5. Գտնում ենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն արդեն իսկ սահմանել է նախնական դատալսումներում նոր ապացույցներ ներկայացնելու պաշտպանի հնարավորությունը և այդ հարցը հստակեցնելու անհրաժեշտության կապակցությամբ հեղինակի մտահոգությունները տեղին չեն: Բանն այն է, որ օրենսգրքի 319-րդ հոդվածում խոսվում է, ի թիվս այլնի, պաշտպանի կողմից ներկայացված ապացույցների հետազոտման մասին և որևէ սահմանափակում չկա առ այն, որ դրանք պետք է նախաքննության ընթացքում արդեն իսկ հետազոտված լինեն: Տեղին չէ նաև հեղինակի մտահոգությունն այն կապակցությամբ, որ առկա պայմաններում պաշտպանը չի կարողանա ներկայացնել ամբողջությամբ նոր ապացույց հետազոտելու առաջարկություն, քանի որ հնարավորություն չունի հիմնավորել դրանով այս կամ այն հանգամանքը հաստատվելու պնդումը:

6. Համաձայն չենք հեղինակի այն մոտեցմանը, որ գործող քրեական դատավարության օրենսգիրքը պատշաճ է ձևակերպել պաշտպանի կողմից ապացույց ներկայացնելու դատավարական հնարավորությունը այն առումով, որ ներկայացվածի ապացուցողական նշանակությունը կախման մեջ չի դրել այն որպես ապացույց ճանաչելու վարույթն իրականացնող մարմնի որոշումից: Բանն այն է, որ որքան էլ որ պաշտպանի ներկայացրածն օրենսդրի կողմից իսկզբանե անվանվում է ապացույց, դրանք որպես իրեղեն ապացույց կամ արտավարության փաստաթուղթ ճանաչելու ընթացակարգում որևէ բացառություն չկա այն կանոնից, որ օրինակ, քրեական վարույթի շրջանակներից դուրս ձևավորված փաստաթղթերը վարույթն իրականացնող մարմնի կողմից զննվում են, ինչպես նաև համապատասխան որոշմամբ ճանաչվում են արտավարության փաստաթուղթ և կցվում վարույթի նյութերին: Ընդ որում՝ հարցը տարբեր մեկնաբանություններ է ստացել նաև Ուղեցույցում: Այսպես, դրանում նախ նշվում է, որ մեղադրյալն այլևս պարտավոր չէ միջնորդություն ներկայացնել իր ներկայացրած առարկան կամ փաստաթուղթն ապացույց ճանաչելու համար, և որ ներկայացնելու պահից դրանք համարվում են *ապացույց*, մյուս կողմից արձանագրվում է, որ վարույթի մասնավոր մասնակցի կողմից փաստաթուղթ ներկայացնելու դեպքում ապացույց է դառնում այդ գործողության արձանագրությունը, իսկ ներկայացված կոնկրետ առարկան կամ փաստաթուղթը կցվում են դրան՝ որպես հավելված: Չի բացառվում, որ վերցված առարկան կամ փաստաթուղթը հետագայում նաև ճանաչվի իրեղեն ապացույց»¹:

¹ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, էջեր 108 և 354: <https://rm.coe.int/new-criminal-procedure-code-guideline-/1680a72908>

7. Առաջարկելով այսպես կոչված «երկու ծրարների» գաղափարն ու գտնելով, որ հիմնական դատալսումներում դատարանը չպետք է կարողանա որևէ կերպ անդրադառնալ լրացուցիչ դատալսումներում քննարկվող հարցերին, այդ թվում չպետք է ծանոթ լինի դրանց վերաբերող ապացույցներին՝ հեղինակը չի անդրադարձել դրա հնարավորությանն այն իրավիճակներում, երբ մեղադրանքի փաստերին ու պատիժ նշանակելու համար էական հանգամանքներին վերաբերող ապացույցները նույնն են: Չ՞է որ պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող մի շարք հանգամանքներ պայմանավորված են մեղադրյալի կողմից առերևույթ կատարված արարքի առանձնահատկություններով, վերաբերում են դրա շարժառիթին, քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների իրավափության պայմաններին, կատարման եղանակին, հանգամանքների, որոնց վերաբերյալ ապացույցները չեն կարող գործնականում առանձնացվել: Եվ հակառակ նույն փաստարկի ներքո հեղինակը չի քննարկել այն հարցը, թե որքանո՞վ են իրականում մեղքի և պատժի հարցերն առանձնացված դատաքննության ենթափուլերում, եթե վերդիկտում շարադրված հետևությունների պատճառաբանությունները դատավորը պարտավոր է շարադրել միայն լրացուցիչ դատալսումներից հետո՝ դատավճռում, պատժի և այսպես կոչված ածանցյալ այլ հարցերի մասին հետևությունների պատճառաբանության հետ միաժամանակ:

Ներկայացված նկատառումները չեն նսեմացնում կատարված աշխատանքի կարևորությունը, կասկածի տակ չեն դնում հետազոտության պատշաճությունը:

Վերոգրյալի հիման վրա հանգում եմ հետևության, որ.

1. Լուսինե Տիգրանի Հովհաննիսյանի «Պաշտպանի մասնակցությունը ապացուցմանը առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.04.- Դատական իրավունք - (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությանը և համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին:

2. Ատենախոսության նյութերն ամբողջությամբ ներկայացված են հեղինակի հրապարակումներում և հայտնի են իրավաբանական լայն հանրությանը:

3. Լուսինե Տիգրանի Հովհաննիսյանն արժանի է ԺԲ.00.04 – «Դատական իրավունք» - (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական

դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի՝ իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ

Գ. Ս. Բաղդասարյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ Գ. Ս. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

Դեկանի տեղակալ

Աշոտ Պետրոսյան

12.02.2026 թ.

